Bayerischer Jugendring

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

Հատուկ թողարկում

#40

ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒՐՈՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և Բավարիայի երիտասարդական խորուրդի (BJR) միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում հայաստանյան մի շարք պետական և հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև նախաձեռնող խմբեր իրականացրին համայնքային զարգացման ամենատարբեր ծրագրեր, որոնց կարող եք ծանոթանալ «Ժամանակին համաքայլ» ամսաթերթի հատուկ թողարկման միջոցով:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ HUMANITARIAN NON-GOVERNMENTAL ORGANIZATION

ՀՀ, 0001 Երևան, Թումանյան 10, բն. 7
RA, 0001 Yerevan, Apt. 7, 10 Tumanyan str.

+374 60 378989
+374 60 478989

NewGenerationNGO@gmail.com

https://ngngo.net

New Generation Humanitarian NGO

@NGNGOArmenia

ngngo.armenia

«ՀՀ-ՈՒՄ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՏՆՎԱԾ Է ԱՆՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ»

«Բազմազանություն» սոցիալ-մշակութային, մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող **«Կարողությունների զարգացում»** ծրագրի շրջանակներում հրավիրեց հանդիպում-քննարկում **«ՀՀ-ում խոցելի խմբերի Մարդու Իրավունքների պաշտպանությունը մատնված է անուշադրության»** թեմայով: Հանդիպման ընթացքում խոսվեց կանանց, ԼԳԲԻՔ+ և տրանս անձանց Մարդու Իրավունքների, քրեակատարողական հիմնարկներում ՄԻ գերակայության և պաշտպանության, այլ մշակութային պատկանելություն ունեցող անձանց

ՄԻ իրավիճակի և հասարակական մենթալիտետի, զինծառայողների, սեռական բռնության ենթարկված անձանց ՄԻ, մեդիա դաշտի մասին և այլն: Խոսնակների ելույթներից հետո ծավալվեց քննարկում հանդիսատեսի կողմից:Քննարկման խոսնակներն էին՝ Գոհարիկ Տիգրանյանը «Հանրային Քաղաքականության Ինստիտուտ» ՀԿ-ից, Բացման խոսքով հանդես եկավ Արտակ Ադամ Առաքելյանը՝ «Բազմազանություն» ՀԿ հիմնադիր-նախագահը, ինչպես նաև Լուիզա Վարդանյանը՝ «ՓԻՆՔ» իրավապաշտպան ՀԿ-ի իրավաբան և իրավախորհրդատու, Լիլիթ Մարտիրոսյանը՝ «Իրավունքի Կողմ» ՀԿ հիմնադիր-նախագահ, Անահիտ Սիմոնյանը՝ «Մարդու Իրավունքների Հետազոտությունների Կենտրոն» ՀԿ համահիմնադիր,Նարե Հովհաննիսյանը՝ «Իրավական Նախաձեռնությունների Կենտրոն» ՀԿ նախագահ, Հովսեփ Խուրշուդյանը՝ «Ազատ Քաղաքացի» ՔՆԱԿ ՀԿ նախագահ,Յուրի Մանվելյանը՝ լրագրող, **Epress.am,** Արման Ղարիբյանը՝ «Իրավունքի Ուժ» ՀԿ համահիմնադիր, Սիրանուշ Դավթյանը՝ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն ՀԿ»-ի հոգեբան:Հանդիպման ժամանակ մասնակիցներից շատերը ձեռք բերեցին նաև կազմակերպության կողմից հրապարակված «Հասարակության բազմազանությունը» թեթև ընթերցանության ձեռնարկը:

Ծրագիրը իրականացվել է «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, մարդասիրական ՀԿ-ի կողմից, որը ֆինանսավորել է Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՐԵՑ «ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՔԱՂԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ» ԾՐԱԳԻՐ

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն իրականացրեց «Նոր սերնդի քաղլրագրողների պատրաստման» ծրագիրը: Հայաստանի հյուսիսային երեք մարզերը (Լոռի, Տավուշ, Շիրակ) ներկայացնող 21 երիտասարդ մասնակցեցին լրագրության և քաղլրագրության, տեսա-լուսանկարահանման դասընթացների:Յուրաքանչյուր նոր նյութը յուրացնելու համար աշխատանքային հանդիպման երիտասարդ մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց ստացած գիտելիքները գործնականում կիրառելու:Դասընթացներից հետո մասնակիցները հնարավորություն ունեցան սեփական լրագրողական, քաղլրագրողական, ֆոտո, վիդեո կամ մուլտմեդիա նախագծերը իրենց համայնքներում իրականացնելու:

Ծրագիրը իրականացվել է «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի կողմից, որի ընթացքում ստեղծված մեդիա նյութերի հեղինակների հոնորարների տրամադրումը ֆինանսավորել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին:

«ԳՅՈՒՄՐՈՒ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՐԵՑ «ԱՍՈՒԼԻՍ-ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐԸ

«Գյումրու Առաջընթաց» Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն ՀԿ-ն իրականացրեց «Ասուլիս-Հնարավորություններ երիտասարդների համար» ծրագիրը:Կազմակերպվեց ասուլիս-հանդիպում, որը նախատեսված էր Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) և «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի (ՆՍՀԿ) շարունակական համագործակցության արդյունքում իրականցված և իրականացվելիք երիտասարդական ծրագրերի լուսաբանման համար:

Ասուլիսի ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները՝

- BJR-ի մասին,
- ՆՍՀԿ-ի մասին,
- Համատեղ ծրագրերի մասին,
- BJR-ի նպատակները երիտասարդների զարգացման գործում միջազգային հարթակում,
- Փոքր դրամաշնորհների մասին ակնարկ,
- Երիտասարդական փոխանակման ծրագրերը,
- Հնարավորությունները երիտասարդների համար:

Բանախոսներն էին «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ գրասենյակի ղեկավար Արման Սահակյանը և Բավարիայի երիտասարդական խորհուրդի գործադիր տնօրեն Գաբրիելա Վայցմանը:

Հանդիպումը անցավ ակտիվ մթնոլորտում և ավարտվեց հարց ու պատասխանով:

Ծրագիրը իրականացվել է «Գյումրու առաջընթաց» ՀԿ-ի կողմից, որը ֆինանսավորել է «Նոր սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին:

LIFE ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԸ ԵՐԵՎԱՆԻ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԿՍԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դասընթացը կազմակերպվել էր «Իրավունք, ոչ նվիրատվություն» նախաձեռնության կողմից:Դասընթացի առաջին օրը մասնակիցները ծանոթացան «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և թեստավորման կարևորությունը» թեմային:

Դասընթացավար-փորձագետ Հմայակ Ավետիսյանը ներկայացրեց թեման ամբողջությամբ՝ ՄԻԱՎ վիրուսը, փոխանցման ուղիները, պաշտպանության մեխանիզմները, ինչպես նաև թեստավորվելու կարևորությունը:Օրվա երկրորդ կեսին իրականացվեց ԿՍԿ համայնքի կարիքների գնահատում, որի արդյունքները կամփոփվեն մեկ փաստաթղթում և կներկայացվեն շահագրգիռ կողմերին:Դասընթացի երկրորդ օրը մասնակիցները հանդիպեցին իրավաբան-փաստաբան Անահիտ Մկրտչանին: Հանդիպումը անցավ անկաշկանդ մթնոլորտում, մասնակիցները փորձագետին հղեցին իրենց հետաքրքրող հարցերը և ստացան պատասխաններ:Դասընթացի ավարտին մասնակցիները ստացան հավաստագրեր:

«ՏՆԱՇԵՆ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ

Ծրագիրը միտված էր Արմավիրի մարզի Շենիկ գյուղի երիտասարդների համար ոչ ֆորմալ կրթության ստեղծմանը տարբեր դասընթացների, քննարկումների, ֆիլմերի դիտումների և հետաքրքիր մարդկանց հետ փորձի փոխանակման միջոցով: «ՏնաՇեն»-ում տեղի ունեցան քննարկումներ առաջնորդություն, թիմային աշխատանք, խտրականություն և հավասարություն, կամավորություն և ակտիվիզմ թեմաներով: Փորձեցինք կատարել համայնքի կարիքի գնահատում, առանձնացնել ամենաէական խնդիրները, գտնել դրանց հնարավոր լուծումները:

Ունեցանք նաև մոտիվացնող հանդիպումներ տարբեր ոլորտներից հրավիրված խոսնակների հետ, ովքեր իրենց փորձը կիսեցին մեր մասնակիցների հետ և ծանոթացրին նոր հնարավորությունների:

Ծրագրի ավարտից հետո, մեր տնաշենցիները իրենց համայնքային զարգացման ծրագրով հանդես կգան համայնքապետարանում և կփորձեն հասնել խնդիրների լուծմանը:Ծրագիրը իրականացվել է «Շենիկի ակտիվ երիտասարդներ» նախաձեռնության կողմից, որը ֆինանսավորել է Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին:

«ԴԱՐԲԱՍԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»-Ը ՆԱԽԱՁԵՌՆԵԼ ԷՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՌՕՐՅԱ ԾՐԱԳԻՐ

2020 թվականի հունվար 24-26 «Դարբասի երիտասարդական կենտրոն»-ը նախաձեռնել էր կարողությունների զարգացման եռօրյա ծրագիր: Ծրագրին մասնակցում էին դարբասաբնակ 12 երիտասարդներ Մասնակիցներ հնարավորություն ունեցան ներկա լինելու մի քանի դասընթացների, որոնց թեմաները հենց իրենք էին առաջարկել:1-ին օրը Դավիթ Ամիրյան խոսեց մի քանի համակագչային ծրագրերից: 2-րդ օրը Կարինե Նահապետյանը ներկայացրեց հայ ժամանակակից գրողներին:

Մի փոքրիկ պատմվածք մասնակիցները վերլուծեցին և դասընթացի ավարտին ստացան ժամանակակից հայ գրողների գրքերից: 3-րդ օրը վեր հանեցին մի քանի համայնքային խնդիրներ և փորձեցին այդ խնդիրներին լուծումներ մտածել, դրանից բացի խոսեցին մի քանի ՍԶ-ների մասին, որոնք ինչ-որ բան են փոխել իրենց համայնքում: Օրվա ավարտին մասնակիցները ստացան հավաստագրերի և պլանավորեցին իրենց հետագա անելիքները:

Ծրագիրը իրականացվել է «Դարբասի երիտասարդական կենտրոն» նախաձեռնության կողմից, որը ֆինանսավորել է Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին:

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԼԱՅՖ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԴՊՐՈՑԸ

Հունվարի 24-26-ը «Հաջողակ ուղի» երիտասարդական նախաձեռնության կողմից Վանաձոր քաղաքում իրականացվեց ԼԱՅՖ առաջնորդների դպրոցը: Ծրագրը նախատեսված էր ՀՀ մարզերի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչ երիտասարդների համար:Ծրագրի ընթացքում երիտասարդները հնարավորություն ունեցան]անոթանալու առաջնորդության թեմային, զարգացնելու հաղորդակցման հմտություններն ու ծանոթանալու ոչ բռնի հաղորդակցման մեթոդներին: Եռօրյա ծրագրի շրջանակներում մասնակիցները հնարավորություն ունեցան ինչպես լսել, ծանոթանալ թեմաների հետ, այնպես էլ տարբեր պրակտիկ վարժությունների միջոցով կիրառել սովորած հմտությունները:

Ծրագիրը իրականացվել է «Հաջողակ ուղի» նախաձեռնության կողմից, որը ֆինանսավորել է Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին:

«ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

«Կարողությունների զարգացման» ծրագրի առաքելությունն է նպաստել ակտիվ քաղաքացիության զարգացմանը Դիլիջանում, ինչպես նաև ձևավորել դիլիջանցիների ակտիվ խումբ, որոնք ունեն մոտիվացիա՝ համայնքը զարգացնելու:Ծրագրի շրջանակում Դիլիջան համայնքի երիտասարդները ստացել են ակտիվ քաղաքացիության հայեցակարգի և առանձնահատկությունների մասին գիտելիքներ, ծրագրի նախագծելու և իրականացնեու մասին գիտելիքներ, հնարավորություն են ունեցել շփվելու իրենց հասակակիցների հետ և կատարել փորձի փոխանակում, ինչպես նաև ձեռք են բերել առաջնորդ դառնալու հմտություններ:

Արդյունքում, 12 երիտասարդներ ստացել են իրավասություն իրենց տեղական համայնքում փոքր դրական փոփոխություններ նախաձեռնելու՝ իրականացնելով իրենց սեփական սոցիալական նախաձեռնությունները:Ծրագիրը իրականացվել է «Դիլիջանի համայնքային կենտրոն» նախաձեռնության կողմից, որը ֆինանսավորել է Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին:

ԼՈՒՍԱՇՈՂԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳԻ ԿՈՒՆԵՆԱ

Արարատի մարզի Լուսաշող համայնքն իր զբոսայգին կգործարկի շատ շուտով՝ այս գարնանը:

Լուսաշող համայնքի պատանիներն ու երիտասարդները «Թո՝ւյլ տուր, որ լույսդ շողա» նախաձեռնությամբ Լուսաշող համայնքում կառուցում են հանրային զբոսայգի, որը կդառնա ժամանցի վայր համայնքային երիտասարդության համար: Համայնքի բնակիչները հնարավորություն կունենան իրենց ազատ ժամանակը վայելել գեղեցիկ զբոսայգում, որն արդեն գարնանը կանաչապատման աշխատանքներից հետո կարող է շահագործվել: Ծրագիրը իրականացվել է «Թո՝ւյլ տուր, որ լույսդ շողա» նախաձեռնության կողմից, որը համաֆինանսավորել է Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին:

ԲԵՐԴՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԽԱՂԱՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ ՏԵՂԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Փետրվարի 1-ին Բերդում կայացավ Մարդու իրավունքներ և Խաղաղաշինություն թեմայով դասընթաց տեղի երիտասարդների համար: Դասընթացի ներածական մասում ներկայացվեց Սահմանաբնակ երիտասարդների ներուժի բացահայտում հասարակական կազմակերպության նպատակներն ու գործունեությունը: Խոսվեց համայնքի զարգացման գործում երիտասարդների ներգրավվածության կարևորության մասին:Գործնական վարժությունների և խաղի միջոցով անդրադարձ կատարվեց կոնֆլիկտի հաղթահարման հիմնական տեսակներին: Հետաքրքիր քննարկում ծավալվեց խաղաղաշինության և մարդու իրավունքների կապի շուրջ: Նշվեց տեսակետ, որ խաղաղությունը մարդու իրավունքների բնականոն գոյության գլխավոր նախապայման է:

Ինչպես նաև խոսվեց մարդու իրավունքների տեսության և հիմնական ուղղությունների, իրավական կարգավորումների մասին:Շնորհակալություն Հայ օգնության ֆոնդի Բերդի գրասենյակին մեզ հյուրընկալելու համար:

Ծրագիրը իրականացվել է «Սահմանաբնակ երիտասարդների ներուժի բացահայտում» ՀԿ-ի կողմից, որը ֆինանսավորել է Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ»

Նախաձեռնության շրջանակներում ստեղծվել է «Նոյեմբերյանի տեղեկատու» ֆեյսբուքյան խումբը, որտեղ Նոյեմբերյանի երիտասարդ կամավորները պարբերաբար տեղադրում են համայնքին վերաբերող նորություններ, տեղեկատվություն համայնքային խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև ուսուցողական ու տեղեկատվական բովանդակությամբ նյութեր ամենատարբեր թեմաների վերաբերյալ: Գրանցման օրվանից մինչ օրս խմբին անդամագրվել են ավելի քան 1000 մասնակիցներ, այդ թվում տարբեր բնակավայրերի երիտասարդներ, համայնքի ղեկավարներ, ԱԺ պատգամավորներ, ավագանու անդամներ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակիցներ և միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Ֆեյսբուքյան այս խումբը հավակնում է դառնալ Նոյեմբերյանի տարածաշրջանի տեղեկատավական ամենամեծ հարթակը, որտեղ առաջիկայում համայնքի ղեկավարները և գործարարները ևս կկարողանան տեղադրել հոդվածներ և կազմակերպել առցանց հանրային քննարկումներ: Խմբի ստեղծման գաղափարի հիմքում տարբեր հետաքրքրություններ և շահեր հետապնդող մարդկանց կարծիքները քաղաքակիրթ ձևով ներկայացնելը և հանրային քննարկումներ կազմակերպելն է: Ծրագիրը նպաստել է երիտասարդների մեդիագրագիտության բարձրացմանը և ստեղծել է բարենպաստ միջավայր համայնքային խնդիրների լուծման գործում նրանց մասնակցությունը ապահովելու համար:

Ծրագիրը իրականացվել է «Սի-Սի-Դի» ՀԿ-ի կողմից, որը ֆինանսավորել է Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին

ՎԱՆԱՁՈՐԻ № 35 ՆԵՐԱՌԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՒՅՔՈՎ

Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում և համաֆինանսավորմամբ մանկապարտեզը համալրվեց նոր, գունավոր և ներառական աթոռներով, պահարաններով և սեղաններով: Գնումները կատարելիս հաշվի են առնվել մանկապարտեզ հաճախող երեխաների տարիքը և կարիքները, հատկապես ուշադրություն դարձնելով հաշմանամություն ունեցող երեխաներին:

Նոր գույքը առավել ներառական և դրական է դարձնում մանկապարտեզի միջավայրը, հեշտացնում է ներառական երեխաների համար գույքից օգտվելը:Ծրագիրը իրականացվել է «Վանաձորի № 35 ներառական մանկապարտեզը» ՀՈԱԿ-ի կողմից, որը ֆինանսավորել է Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին:

ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄՈԼՈՐԱԿԸ»

Փետրվարի 14-ին Գյումրի քաղաքում տեղի ունեցավ «Մեր պատմության մոլորակը» թատերական ներկայացումը:«ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄՈԼՈՐԱԿ» թատերական ներկայացման նպատակն էր խթանել հանդուժողականության և խաղաղասիրության գաղափարը, սերը և հարգալից վերաբերմունքը Գյումրի քաղաքի երեք սերունդների՝ պատանիների, երիտասարդների, միջին տարիքի մարդկանց և տարեցների միջև: Կազմակերպված թատերական միջոցառումը նվիրված էր հանդուժողականության, խաղաղասիրական թեմաներին՝ խտրականության կանխարգելում, կոնֆլիկտների խաղաղ հանգուցալուծում: Ներկայացումները կրելու են շարունակական բնույթ:

Ընտրված էր Վ. Սարոյանի «Պատերազմ» պատմվածքը, որը բեմականացվեց ՀՀ վաստակավոր արտիստ, Գյումրու դրամատիկ թատրոնի դերասան-ռեժիսոր Հովհաննես Հովհաննիսյանի կողմից: Դերասանական խումբը ընտրված էր կազմակերպության շահառուներից, որոնք գերազանց ներկայացրեցին բեմականացումը:

Միջոցառման մասնակիցները՝ «Արաքս» բարեգործական ՀԿ-ի անդամները, շահառուները, հյուրերը, տպավորված էին ոչ միայն ոչ պրոֆեսիոնալ դերասանների խաղով, այլ նաև հանդուժողականության, խաղասիրության, խտրականության կանխարգելման, կոնֆլիկտների խաղաղ լուծման սարոյանական տեղեկատվության արդիականության կարևորության մատուցմանը՝ ո՛չ պատերազմին, ո՛չ խտրականությանը:Ծրագիրը իրականացվել է «Արաքս» բարեգործական ՀԿ-ի կողմից, որը ֆինանսավորել է Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին:

«ՄԵՆՔ ՏԵՍԱՆԵԼԻ ԵՆՔ»

«Քալրֆուլ հաուս» իրականացրեց «Մենք տեսանելի ենք» ծրագիրը, որի շրջանակներում երիտասարդ տրանս* ակտիվիստները կազմակերպեցին հանրային իրազեկման միջոցառում:
Տրանս* անձանց մասին պատմող թռուցիկներ բաժանվեցին, պաստառներ փակցվեցին քաղաքում:
«Ես տրանս* եմ և տեսանելի եմ» գրությամբ փուչիկներ բաց թողնվեցին օդ:
Միջոցառմանը մասնակցում էին համախոհներ, որպեսզի ցույց տան իրենց համերաշխությանը տրանս* անձանց և աջակցեն համայնքին:

Միջոցառումը ևս մեկ առիթ էր, որպեսզի տրանս* ակտիվիստները հասարակությանը հիշեցնեն տրանս* անձանց գոյության մասին, նրանց ազատ ինքնարտահայտման և մարդու իրավունքների մասին:
Միջոցառման կազմակերպիչները նմանատիպ միջոցառում նախատեսում են անցկացնել նաև Մարտի 31-ին՝ տրանսների* տեսանելիության օրը:
Ծրագիրը իրականացվել է «Քալրֆուլ հաուս» սոցիալ-մշակութային և իրավապաշտպան ՀԿ-ի կողմից, որը ֆինանսավորել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին:

«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ»

Երևանի և ՀՀ մարզերի 16-30 տարեկան երիտասարդների համար անցկացվեց «Երիտասարդները դառնում են առաջնորդներ» ճամբարը:
Ճամբարի անցկացման առաջին օրը սկսվեց թիմի կառուցման վարժությունով, մասնակիցները ծանոթացան միմյանց, սովորեցին թիմային աշխատանքի առավելությունները:
Երիտասարդ ակտիվիստներին ներկայացվեցին նաև առաջնորդություն և կամավորություն թեմաները, մասնակցիները ծանոթացան մի շարք կամավորության հնարավորությունների:
Օրը շարունակվեց կոնֆլիկների և հաղթահարման թեմայով:
Երկրորդ օրը նվիրված էր խտրականության արգելքին, բռնության և խոշտանգումների ճանաչմանը: Երկրորդ կեսին քննարկվեցին առողջապահական թեմաներ՝ ՄԻԱՎ-ի կանխարգելում և այլն:
Ճամբարի երրորդ օրը մասնակիցները սովորեցին ծրագրերի մշակում և կառավարում, կիրառեցին ստացած գիտելիքները գործնականում:
Ճամբարի ավարտին մասնակցիները ստացան հավաստագրեր:
Ծրագիրը իրականացվել է «Զարգացման ժամանակ» նախաձեռնության կողմից, որը ֆինանսավորել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին:

ԳՐԱԴԱՐԱՆ-ՀԱԿԱՍՐՃԱՐԱՆ

Արարատի մարզի Վեդի քաղաքի գրադարան-հակասրճարանը կահավորվեց նոր գույքովԱրարատի մարզում և հատկապես Վեդի քաղաքում բացակայում են երիտասարդական ժամանցի վայրերը: Վեդի քաղաքի մի շարք երիտասարդներ համախմբվեցին ոչ ֆորմալ հարրթակ՝ գրադարան-հակասրճարան ունենալու գաղափարի շուրջ, որը կապահովի երիտասարդների զբաղվածությունը, հնարավորություն կտա նրանց ազատ ժամանակը արդյունավետ օգտագործելու Վեդիում: Հակասրճարանը ապահովում է ոչ միայն ժամանց, այլև կրթություն՝ գրքի քննարկումներ, լեզվի խմբակներ, մեդիագրագիտության դասընթացներ և բանավեճեր: Կազմակերպվում են արվեստին նվիրված տարբեր միջոցառումներ, որոնք ակտիվացնում են քաղաքի մշակութային կյանքը: Նախաձեռությունը դրամաշնորհային ծրագրի շրջանակներում համալրեց գրադարան-հակասրճարանը նոր գույքով, ինչը հնարավորություն կտա ցանկացած միջոցառում անցկացնել հարմարավետ և հաճելի միջավայրում:Ծրագիրը իրականացվել է «Գրադարան-հակասրճարան» նախաձեռնության կողմից, որը ֆինանսավորել է Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին:

«ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»

2020 թվականի հունվարի 15-ից փետրվարի 15-ը «Սպիտակի Ակտիվ Երիտասարդներ» նախաձեռնության կողմից իրականացվեց «Քաղաքային զբոսայգու բարեկարգում» ծրագիրը, որին մասնակցեցին նախաձեռնության անդամները և մի շարք կամավորներ:Ծրագրի նպատակն էր բարելավել քաղաքային զբոսայգում հանգստի կազմակերպումը: Ծրագրին մասնակցեցին ոչ միայն նախաձեռնության անդամները, այլ նաև կամավորներ, որը նպաստեց նաև քաղաքում ակտիվ երիտասարդների բացահայտմանը և նախաձեռնողականության բարձրացմանը:Ծրագրի ընթացքում մասնակիցների կողմից պատրաստվեցին և զբոսայգում տեղադրվեցին թվով 4 նոր նստարաններ, որոնք երկար տարիներ կծառայեն քաղաքացիներին:

Ծրագրի ավարտին կազմակերպվեց հանդիպում, որի ընթացքում ծրագրի համակարգող Էդգար Քոչարյանը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին, իսկ մասնակիցներն էլ պատրաստակամություն հայտնեցին ներգրավվել այլ ծրագրերում ևս:Ծրագիրը իրականացվել է «Սպիտակի Ակտիվ Երիտասարդներ» նախաձեռնության կողմից, որը ֆինանսավորել է Նոր Սերունդ Մարդասիրական ՀԿ-ն Բավարիայի երիտասարդական խորհուրդի (BJR) ֆոնդերի հաշվին: